

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանությունը կանոնակարգվում է ինչպես Հայաստանի կողմից 1993 թ. վավերացված «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայով, այնպես էլ ՀՀ բազմաթիվ օրենսդրական ակտերով, որոնցից հատկանշական են ՀՀ անտառային օրենսգիրքը, «Կենդանական աշխարհի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքները:

**Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը** կոչված է նպաստելու անտառների գիտականորեն հիմնավորված պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրությանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ելնելով դրանց էկոլոգիական, սոցիալական և տնտեսական նշանակությունից: Անտառներն ըստ իրենց նպատակային նշանակության դասակարգված են՝ պաշտպանական (ջրապահպան՝ գետերի, լճերի, ջրամբարների առափնյա անտառներ և հակաէրոզիոն՝ հողապաշտպան անտառազանգվածներ), սոցիալական (սանիտարահիգիենիկ՝ ջրամատակարարման աղբյուրների և սանիտարական պահպանության գոտիների և առողջարարական ու ռեկրեացիոն նշանակության անտառներ) և հատուկ (բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում ընդգրկված անտառներ) նշանակության անտառների:

Օրենսգրքում ամրագրված են անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության, էկոլոգիական նշանակության ու արտադրողականության բարձրացման, արդյունավետ օգտագործման և անտառչինական նախագծերի կազմման, պետական անտառային կադաստրի վարման, անտառային ֆոնդի պետական հաշվառման, գույքագրման և մոնիտորինգի իրականացման սկզբունքները, նորմերն ու պահանջները, անտառօգտագործման տեսակները, ժամկետները, պայմանները, անտառօգտագործողները, նրանց իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը:

Իրավաբանական անձանց ու քաղաքացիների համար սահմանված են անտառօգտագործման 6 տեսակներ՝ բնափայտի և երկրորդական անտառանյութի (կոճղերի) մթերում, կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների ու մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում ու մթերում), որսորդական կարիքների համար ու գիտահետազոտական և նշակութային-առողջարարական նպատակներով անտառօգտագործում: Անտառային տարածքներն օգտագործման են հատկացվում անտառահատման տոմսի կամ օրդերի, անտառային տոմսի, անտառօգտագործման պայմանագրի հիման վրա, որը սահմանում է անտառային պաշարների կամ անտառի տեղամասերի միանվագ օգտագործման իրավունք:

Քաղաքացիներն իրավունք ունեն նաև գտնվել անտառներում իրենց հանգստի, անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ, հատապտուղ, ընկույզ, սունկ և այլ սննդամթերք հավաքելու նպատակով, որի դեպքում նրանք պարտավոր են պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, թույլ չտալ ծառերի ու թփերի վնասում, կտրատում ու հատում, անտառի աղտոտում, կենդանիների բնատեղերի ոչնչացում և այլ խախտումներ:

Օրենսգրքի համաձայն անտառախախտման տեսակներ են համարվում՝ առանց անտառաչինական փաստաթղթերի անտառավերականգնման և այլ աշխատանքներ կատարելը, հատատեղերի հատկացման ու տեղազննման, բնափայտի ու երկրորդական անտառանյութի մթերման և դուրսբերման կանոնները խախտելը, անտառային տարածքներն ինքնակամ զավթելը կամ դրանք ոչ նպատակային օգտագործելը, անտառում ծառերը, թփերը, մատղաշը, նշակաբույսերը վնասելը կամ դրանք

ապօրինաբար հատելը կամ դրանց օգտագործման կանոնները խախտելը, ապօրինաբար խոտհունձ անելը, անասուններ արածեցնելը, խոտհարքներն ու արոտահանդակներն օգտագործելը կամ դրանց օգտագործման կանոնները խախտելը, ինքնակամ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ և այլն հավաքելն անտառային այն տարածքներում, որտեղ դա արգելվում է կամ դրանց օգտագործման ժամկետներն ու եղանակները խախտելը, անտառի կենդանական աշխարհի օբյեկտներին վնաս հասցնելը, հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառը վնասելը կամ ոչնչացնելը, հրդեհային անվտանգության և սանիտարական կանոնները խախտելը, անտառային հողերում սահմանափակող անտառաշինական և այլ նշանները ոչնչացնելը կամ վնասելը, անտառային հողերն առանց թույլտվության օգտագործելը, շենքեր և շինություններ կառուցելը, բնափայտ մշակելը և հողերի բերրի շերտը վնասելը կամ ոչնչացնելը, անտառները քիմիական և ռադիոակտիվ նյութերով, թափոններով, արտադրական կեղտաջրերով ու արդյունաբերական արտանետումներով աղտոտելը, անտառչորացման առումներն ու դրենաժային համակարգերը և ճանապարհները վնասելը կամ ոչնչացնելը:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում: Բուսական աշխարհի պահպանության օբյեկտներ են համարվում՝ բուսական բոլոր տեսակները, դրանց համակեցություններն ու աճելավայրերը, ինչպես նաև բուսաբանական այգիները, դենդրոպարկերը, անտառտնկարկները և բուսական ծագում ունեցող բնության հուշարձանները: Սահմանված են բուսական աշխարհի ուսումնասիրության խնդիրները, պետական մոնիտորինգի ու հաշվառման իրականացման, կադաստրի վարման, բույսերի Կարմիր գրքի կազմման ու վարման պահանջներն ու մոտեցումները, պահպանության և օգտագործման բնագավառում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, տնտեսական խթանման և վերահսկողության իրականացման վերաբերյալ պահանջները: Օրենքը կարգավորում է նաև բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման հետ կապված հարաբերությունները: Բուսական աշխարհի օբյեկտների օգտագործողներ կարող են հանդիսանալ իրավաբանական ու ֆիզիկական անձինք: Բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործման են տրամադրվում՝ գյուղատնտեսական (սելեկցիա, անասունների արածեցում, խոտհունձ, մեղվաբուծություն), արդյունագործական (բնափայտային, սննդային, դեղատու, տեխնիկական բույսերի ու դրանց առանձին մասերի ու արգասիքների հավաք ու մթերում), սոցիալական, բնապահպանական, գեղագիտական (ռեկրեացիա, առողջապահություն, կանաչապատում, ռեկուլտիվացիա, դաշտապաշտպանություն, հողապաշտպանություն) և գիտահետազոտական ու կրթական նպատակներով: Կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը թույլատրվում է միայն գիտահետազոտական, մշակութային մեջ ներդրման ու բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակով: Գյուղատնտեսական ու արդյունագործական նպատակներով բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործման են տրամադրվում լիցենզիայի (որի համար վճարվում է պետական տուրք) ու պայմանագրի հիման վրա, որում ամրագրվում են օգտագործման ժամկետները, կարգը, նորմերն ու վճարման չափը: Սոցիալական, բնապահպանական, գեղագիտական, գիտահետազոտական ու կրթական նպատակներով բուսական աշխարհի օբյեկտների օգտագործումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: Օրենքով ամրագրված են նաև օգտագործողների իրավունքները, պարտականությունները, սահմանափակումները և օգտագործման իրավունքի դադարեցման հիմքերը: Բուսական աշխարհի օբյեկտների օգտագործումը վճարովի է՝ բացառությամբ գիտահետազոտական ու կրթական նպատակներով օգտագործելուց:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության,

պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում: Կենդանական աշխարհի պահպանության օբյեկտներ են համարվում՝ բնական միջավայրում, անազատ և կիսազատ պայմաններում ապրող կենդանիների վայրի տեսակները, դրանց համակեցությունները, բնակության միջավայրերը, միգրացիայի ուղիներն ու բնադրավայրերը: Սահմանված են կենդանական աշխարհի ուսումնասիրության խնդիրները, պետական մոնիտորինգի ու հաշվառման իրականացման, կադաստրի վարման, կենդանիների Կարմիր գրքի կազմման ու վարման պահանջներն ու մոտեցումները, ինչպես նաև կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ու ուսումնասիրողների իրավասությունները, տնտեսական խթանման և վերահսկողության իրականացման վերաբերյալ պահանջները: Օրենքը կարգավորում է նաև կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հետ կապված հարաբերությունները: Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողներ կարող են հանդիսանալ իրավաբանական ու ֆիզիկական անձինք: Կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործման են տրամադրվում գյուղատնտեսական (սելեկցիա, հողառաջացում), արդյունագործական (որսորդություն, ձկնորսություն, հավաք, այդ թվում՝ կենդանիների կենսագործունեության արգասիքների հավաք ու մթերում), սոցիալական, բնապահպանական, գեղագիտական, գիտահետազոտական ու կրթական նպատակներով: Կարմիր գրքում գրանցված կենդանիների օգտագործումը թույլատրվում է միայն գիտահետազոտական, արհեստական ու բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակով: Գյուղատնտեսական ու արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործման են տրամադրվում լիցենզիայի (որի համար վճարվում է պետական տուրք) ու պայմանագրի հիման վրա: Սոցիալական նպատակներով (սիրողական որս ու ձկնորսություն, ձկնորսության ու որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումն իրականացվում է պայմանագրի հիման վրա: Բնապահպանական, գեղագիտական, գիտահետազոտական ու կրթական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: Օրենքով ամրագրված են նաև կենդանական աշխարհի օգտագործողների իրավունքները, պարտականությունները, սահմանափակումները և օգտագործման իրավունքի դադարեցման հիմքերը: Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը վճարովի է՝ բացառությամբ գիտահետազոտական և կրթական նպատակներով օգտագործումից:

**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով** սահմանված են բնության հատուկ պահպանվող տարածքների՝ պետական արգելոցների, ազգային պարկերի, պետական արգելավայրերի և բնության հուշարձանների կազմավորման, պահպանման ու օգտագործման և այդ տարածքների պետական կադաստրի կազմման սկզբունքները, պահպանության ռեժիմները, դրանց նախնական կոնսերվացման կարգը և այլն: Բնության հատուկ պահպանվող տարածքների կազմակերպումը կատարվում է բնության պահպանության համակարգված հեռանկարային սխեմաների և հատուկ մշակված նախագծերի հիման վրա: Պետական կադաստրը կազմվում է բնության հատուկ պահպանվող տարածքների ծրագրավորումը և պահպանությունը ապահովելու, գիտական հետազոտությունների ու համապատասխան ռեժիմների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ծրագրերի կազմման ու արտադրողական ուժերի տեղաբաշխման ժամանակ դրանց դերը հաշվի առնելու նպատակով: Պետական արգելոցային տարածքում արգելվում է բնական պրոցեսների զարգացման խախտման հետ կապված որևէ գործունեություն, ինչպիսին են ջրային պաշարների շահագործումը կամ ռեժիմը խախտող որևէ գործունեություն, անտառահատում, բույսերի, ծաղիկների ու սերմերի մթերում, թրթուրավոր ու մեքենայացված տրանսպորտային միջոցների երթևեկություն, որսորդություն, ձկնորսություն, կենդանիների ապրելավայրերի պայմանների խախտում, կենդանիների ու բույսերի նոր տեսակների ներմուծում կամ առանձին տեսակների քանակի մեծացման հետ

կապված որևէ աշխատանք, հավաքածուների հավաք (բացառությամբ գիտական նպատակների), թունաքիմիկատների ու պարարտանյութերի օգտագործում, շինարարություն, հետախուզում ու շահագործում: Ազգային պարկը, ըստ իր առանձին մասերի ֆունկցիոնալ նշանակության, պահպանության ու օգտագործման ռեժիմի, բաժանվում է համապատասխան գոտիների, որոնցից արգելոցային գոտու տարածքներն հանվում են տնտեսական շահագործումից և դրանց համար գործում է արգելոցային գոտու ռեժիմը: Ազգային պարկի մյուս գոտիների համար օրենքում ամրագրված են սահմանափակումներ, որոնց համաձայն արգելվում են՝ պարկի գործունեության հետ չառնչվող արդյունաբերական ու այլ օբյեկտների շինարարություն ու շահագործում, հետախուզում ու օգտակար հանածոների մշակում, անտառահատումներ (բացառությամբ՝ սանիտարական), բույսերի ու կենդանիների ներմուծում ու կլիմայավարժեցում և պարկի նպատակներին ու կանոնադրությանը հակասող ցանկացած գործունեություն: Պետական արգելավայրերը էտալոնային, գիտական, պատմամշակութային ու տնտեսական արժեք ներկայացնող բնական համակարգերի ու դրանց տարրերի տեսակների պահպանության ու վերականգնման նպատակով մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված վայրեր են, որտեղ արգելվում է էկոհամակարգերի կամ գիտական կամ մշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությունը խախտող որևէ գործունեություն: Բնության հուշարձանները բացառիկ կամ տիպիկ գիտական և պատմամշակութային հատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են, որոնց պահպանության ռեժիմը սահմանվում է այդ տարածքների վկայականով:

**«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքն** ի սկզբանե հանդիսանում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի շարունակությունը կազմող կամ լրացնող իրավական ակտ և սահմանում է Սևանա լճի և դրա էկոհամակարգերի բնականոն զարգացման, վերականգնման, պահպանման, օգտագործման, լճի ու դրա ջրահավաք ավազանի էկոլոգիական գոտեվորման և դրանցում գործունեության իրականացման սկզբունքները, սահմանափակումներն ու պահանջները, համալիր ու տարեկան ծրագրերի կազմման, լանդշաֆտների պահպանության, քաղաքաշինական հատակագծման, էկոլոգիական անձնագրավորման, նորմավորման ու վերահսկողության պահանջները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները: Այս օրենքի շարունակությունն է կազմում **«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքը**, որով սահմանվում են Սևանա լճի և դրա էկոհամակարգերի վերականգնման, բնականոն զարգացման և դրանց օգտագործման հետ կապված կոնկրետ գործողություններն ու դրանց կատարման ժամանակահատվածները:

Ջուլիետա Ղլիջյան  
ՀՀ բնապահպանության նախարարության  
նորմատիվամեթոդական վարչության պետ

Հրատարակվում է Բնական պաշարների կառավարման և  
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ  
[www.reforms.am](http://www.reforms.am)

տպաքանակը՝ 5 000